

ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ

(Ասված Երևանի օդանավակայանում)

Սրբազան և հոգեշնորհ հայրե՛ր, սիրելի պատգամավորնե՛ր.

Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի, Մայր Աթոռի միաբանության և Մայր Հայրենիքի հավատացյալ հայ ժողովրդի անունից քաղցր պարտականություն՝ ունեմ, այս պատմական ու նվիրական պահին, սրտագինս ողջունելու Ազգային-եկեղեցական սրբագումար ժողովի հարգարժան պատգամավորներին, Մայր Աթոռի հյուրերին և հոգնաշատ ճանապարհորդությունը հանձն առած մեր ուխտավոր հարազատներին։

Դուք բարո՞վ եկաք։

Հեռու թե մոտիկ թեմերից, Արևելքից թե Արևմուտքից, հյուսիսից թե հարավից, հեռավոր ափերից, եկել եք ծնրադրելու մեր նախնյաց և մեր ներկա Սրբություն Սրբոց՝ հայ քրիստոնյա մարդու Լուսո Տաճար՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի խորանների առաջ, եկել եք համբուրելու դարավոր ու մեռոնաբույր սրբությունները, Լուսավորչի արժանավոր հաջորդի Ս. Աջը, Սրբալույս Մեռոնի կաթսան, եկել եք համբուրելու Հայրենի սրբազան այս հողը, որի տերն է այսօր մեր ժողովուրդը, և ողջագուրվելու Մայր Հայրենիքում ապրող ձեր հարազատների հետ, ձեր կարոտն առնելու Հայրենի երկրից և ժողովրդից։

Դուք բարո՞վ եկաք...։

Ձեզանից շատերը առաջին անգամ է, որ ոտք են դնում Հայրենի հողի վրա... այս խորհրդավոր րոպեին, ինչպիսի՜ քաղցր ու անանուն զգացումներ ալեկոծում են ձեր հավատավոր ու հայրենասեր հոգին...։ Ձեզ համար անմոռանալի պիտի մնան այս րոպեները, Հայրենիքից և Ս. Էջմիածնից ստացված առաջին ու խորը տպավորությունները։

Դուք բարո՞վ եկաք, մեր թանկագին բարեկամներ և հարազատներ։ Սրանից մոտ մի տարի առաջ, ձեզանից շատերը այս սրբազան հողերի վրա էին, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու մեծ սգի օրերին, երբ Սփյուռքի մեր սիրելիները եկել էին անկեղծորեն բաժանելու հայ ժողովրդի մեծ վիշտը...

Անցան սգի տխուր օրերը...։

Այսօր դուք եկել եք ուրախ և երջանիկ տրիթով, ձեր ձեռքերով վերացնելու սգի սև քողը Հայրապետական Մայր Աթոռի վրայից և մի անգամ ևս ուրախացնելու մեր այրիացյալ Եկեղեցին և համախմբվելու Հայրենիքի և Ս. Էջմիածնի շուրջ։

Բարի գալուստի այս սրբազան պահին, մի անգամ ևս ազգովին խոնարհվե՛նք մեծագործ ու հայրենասեր Հայրապետի նվիրական շիրմի և հիշատակի առաջ, ուխտե՛նք վառ պահել Լուսավորչի կանթեղը Մայր Աթոռում և հայ ժողովրդի սրտում և կենսագործե՛նք հանգուցյալ Հայրապետի ազգային եկեղեցական միասնության, հայրենասիրության, եկեղեցասիրության, խաղաղասիրության, կրոնների և ժողովուրդների միջև համերաշխության և համագործակցության վսեմ պատգամները։

Աշխատենք սրբությամբ պահել Նրա ազգային միասնության և եկեղեցական միասնականության սրբազան ավանդը մեր առաջիկա Ազգային-եկեղեցական ժողովում։

Դուք բարո՞վ եկաք, մեր հարազատնե՛ր, մեր սիրելինե՛ր։

Թո՛ղ հավետ պայծառ փողփողա Լուսավորչի անմար կանթեղը՝ հայոց կապույտ երկնակամարի վրա...

Թո՛ղ հավետ կանգուն մնա Լուսավորչի Հայրապետական Աթոռը այս պատմական հողերի վրա։

Թո՛ղ ծլի ու ծաղկի հզոր վերելքով՝ անցյալի մոխիրներից վերածնված մեր պանծալի Սովետական Հայաստանը։